ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթեւոսյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ

30.08.2019

Սիրելի՛ դպրոցականներ, հարգարժան մանկավարժներ, կրթության համակարգի նվիրյալներ, հարգելի ծնողներ,

Շնորհավորում եմ բոլորիդ նոր ուսումնական տարվա մեկնարկն ազդարարող Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ: Յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի մեկը գիտելիքներով հարստանալու, իրական արժեքներ ճանաչելու և նոր նպատակներ կյանքի կոչելու սկիզբն է: Հատկապես ջերմորեն եմ շնորհավորում առաջին անգամ գիտության դարբնոց ոտք դնող փոքրիկներին: Թող այս սեպտեմբերի 1-ը նոր ժպիտներ ու հաջողություններ բերի և դառնա նրանց կյանքի ամենահիշարժան օրերից մեկը:

Սիրով շնորհավորում եմ բոլոր դպրոցականներին, ցանկանում ուսումնատենչ ոգի, անսպառ եռանդ, նպատակասլացություն և աշխատասիրություն: Թող ուսումնառության ողջ ընթացքն ուղեկցվի աշխարհաճանաչման և ինքնադրսևորման գիտելիքներով, որում անգնահատելի է ձեր վաստակը, հարգելի մանկավարժներ, քանզի ձեզանից է կախված, թե ինչպիսի հայրենասեր և ազգանվեր քաղաքացիներ կձևավորվեն ապագայում:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի օրվա առթիվ: Մաղթում եմ հաջողություններ ուսուցման և ուսումնառության դժվարին, բայց պատվաբեր գործում: Թող յուրաքանչյուր նոր սկսվող ուսումնական տարի ձեզ էլ ավելի մոտեցնի ձեր նպատակներին:

Լավագույն ցանկություններով՝
ՀՀ Արմավիրի մարզպետ

Համբարձում Մաթեւոսյան